

ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԻՐԱԽԱՂԻ ՈՐՈԳԱՅԹՈՒՄ

ՍՈՆԱ ԱՐՇՈՒՆԵՑԻ

Շա՛տ ուշացումով ծանոթացա կատարվածին՝ 2009 թ. փետրվարի 17-ի թուրքական «Հյուրիյեթ» թերթում տպագրված «Ուսանողներն օրինակ են ծառայում» հրապարակմանը, ուշացումով, քանի որ լայն արձագանք չէր գտել հայաստանյան ԶԼՄ-ներում ու չէր դարձել քննարկման առարկա. ես այն որակում եմ վերջին ժամանակներս իշխանությունների կողմից մեր ազգային հույժ կարևոր թեմաները յոթ կողպեքի տակ պահվող գաղտնիքների շարքին:

Որպես կատարվածի նախաբան ասեմ.

"Ֆուտբոլային հրավերքից" սկսած մեր նախագահն ու արտգործնախարարը որոշեցին, որ հաշվետու չեն ժողովրդի առաջ, թե աջ ձեռքով ի՞նչ են տալիս՝ ու՛մ, իսկ ձախով ի՞նչ են վերցնում ումի՛ց, սակայն փաստերն ապացուցեցին, որ Թուրքիան մեզ տալու ոչի՛նչ չունի, եթե մենք մեր պահանջատիրությունից վերջնականապես չհրաժարվենք, իսկ մեր նախագահի ու արտգործնախարարի Ֆուտբոլային հնարամտության սենսիացիոն աղմուկը անհաջող փորձ էր, զուտ իմիտացիա ստեղծող հայ-թուրքական մերձեցման ու հաշտության: Իրականում մանկամտորեն սիրախաղով տարված, հերթական անգամ ջուր լցրեցին Թուրքիայի ջրաղացին՝ ապակողմնորոշելով աշխարհին ու առանձնապես Ամերիկայի նախագահին՝ Օբամային. այս սիրախաղը պատճառ դարձավ նրան երկմտելու. արդյունքում նա զրկվեց հնարավորությունից կատարելու ամերիկահայությանը տված իր խոստումը և Ապրիլի 24-ը ոչ թե "Հայոց եղեռն" որակեր, այլ միջազգայնորեն ընդունված տերմինը՝ "Ցեղասպանություն": Այստեղ են ասել «ինչ ցանեցին, այն էլ հնձեցին» ու մեղավորներ փնտրելու կարիք չկա, քանզի սիրախաղ ասվածը շա՛տ հեռու է դիվանագիտություն կոչվելուց, կարելի է ասել սոսկ այլընտրանք է, պատրանք, հաջողության հասնելու *ուտոպիա*, որը փուչիկի նման պայթեց Ապրիլի 24-ին՝ Օբամայի ելույթի հետ մեկտեղ:

Մեփական նախաձեռնությամբ թուրքական սիրախաղի որոգայթում հայտնված մեր նախագահին ու արտգործնախարարին ուզում եմ ուղղել մի հռետորական հարց,-

-Արդյո՞ք գիտակցում են "Ֆուտբոլային դիվանագիտության" պարտությունը, թե՞ ողջ

ազգը ստիպված է պատանդ դառնալ իրենց ձախողված սիրախաղին, որը քայլ առ քայլ թուլացնում է հայկական դիրքերը, փոխարենը է՛լ ավելի գոտեպնդում և ինքնավստահ դարձնում Թուրքիային ուրանալու և ժխտելու հայոց ցեղասպանությունը:

ԱՀԱՎԱՍԻԿ ԵՎ Ս ՄԻ ՈՐՈԳԱՅԹ.

Այս անգամ թուրքական կառավարությունը կարողացավ հաջողել իր ստոր քայլն իրագործել օգտագործելով 20 հայ ուսանողներին հյուրընկալելով Թուրքիա. Անատոլիայի Նեշեհիր քաղաքում հայ-թուրք ուսանողների երկխոսության, մերձենալու պատրվակով հյուրընկալված հայ ուսանողներից սիրախաղի քողի տակ թաքնված ստորագրություն կորզել:

Զավեշտական է. թուրքական ցինիկությունը սահմաններ չի ճանաչում: Ահա հերթական հնարքը ցեղասպանությունը խեղաթյուրելու, մերժելու, ցավոք արդեն ուրիշ հնարքներով՝ բարեկամության քողի տակ: Արդյոք երկա ր է ձգվելու հայ-թուրքական սիրախաղը, ե րբ ենք ուշքի գալու, ե րբ ...

Կիսում եմ Արարատ ռազմավարական կենտրոնի տնօրեն Արմեն Այվազյանի մտահոգությունները Թուրքիայում հյուրընկալված 20 հայ ուսանողների խայտառակ, ապազգային համատեղ հայտարարություն տակ ստորագրելու հետ կապված. առանձնապես հայ ուսանողների հայտարարությունը, որտեղ Հայոց ցեղասպանությունը ներկայացված է (1915թ դեպքեր), որի արդյունքում անարգվում է 1.5 միլիոն հայ նահատակների սուրբ հիշատակը և մեր բռնազավթված տարածքների նկատմամբ պահանջատեր լինելու իրավունքը:

Խոստովանեմ՝ հոգուս խորքում խո՛ր ցավ ապրեցի: Փորձում եմ փնտրել, գտնել կատարվածի պատասխանները. հայ ընտանիքում երեխայի սխալ դաստիարակություն, դպրոցական ծրագրերից հայրենասիրական թեմաների դուրս մղու մ... որտե՞ղ, որտե՞ղ փնտրենք արմատները, ինչու՞ ենք թերացել հայ երիտասարդին կրթելու հայրենասիրական ոգով...

Միթե՞ մեր ֆիդայիները՝ Անդրանիկը, Չաուշը, Նժդեհը, Գուրգեն Յանիկյանը, Մովսես Գորգիսյանը, Մոնթեն... հետևորդներ չունեն, սիրտս կտոր-կտոր է լինում:

Միթե՞ Բլեյանական գաղափարներով առաջնորդվող սերունդ է ձևավորվում Հայաստանում և առանձնապես ԲՈՒՀ-երում:

Արթնացի՛ր Շիրազ ու տե՛ս, որ հայ երիտասարդը ուրանում է մեր կարոտի երկիրը՝ Մասիսն ու Սիփանը, Անին, Ղարսն ու Էրզրումը, Վանն ու Բիթլիսը, Մուշն ու Սասունը...

Երբ Թուրքիայում, Ադրբեջանում ազգայնամոլությունը հիվանդագին չափերի է

հասնում, Հայաստանում փորձ է արվում աճող սերնդին կրթել Եվրոպայի խաղի կանոնների չափանիշներով՝ գլոբալիզացիոն գաղափարախոսության կրողներ. աներևակայելի է, որ հայ ուսանողին կարողանում է թուրք երիտասարդը այնպես համոզել, որ անգամ արյունակցական կապերով քույր ազգեր ներկայանալ, մեր երկու թշնամի, իրարամերժ ազգերի միջև, պատրանք ստեղծել հոգևոր միասնականության՝ հավաստիացնելով, որ բոլոր տարաձայնություններն ու թշնամանքը այսուհետ հարթված են: Արդյունքում գայթակղված հայ ուսանողը կարևորելով իր "առաքելության պատմական պահը", նման պատասխանատու փաստաթղթի համատեղ հայտարարության տակ իր ստորագրությունն է դնում: Թուրքական կողմի այս հրավերքի կազմակերպիչների հետին մտքերն ինձ չի զարմացնում, քանի որ քաջ ծանոթ եմ թուրքական ձեռագրին ու չեմ զարմանում, որ "ԱԿՈՍ" օրաթերթի մասնակցությունը կար այդ հրավերքի կազմակերպիչների մեջ, կրկնում եմ՝ չեմ զարմանում, քանզի թուրքը հաճախ է մեզ մորթել մեր իսկ դանակով:

Թուրքական յուրաքանչյուր բարի ժեստի տակ ինչ-որ մութ հնարք է թաքնված՝ աշխարհին մոլորեցնող, ուղղակի պետք է ձեռնպահ մնալ գայթակղության գիրկն ընկնելու որոգայթից:

Կատարվածի հիմնական մեղավորները իրականում Հայաստանի համալսարանի ղեկավար մարմիններն են, դասախոսական կազմը, ովքեր անպատասխանատվությամբ են վերաբերվել Թուրքիա մեկնող ուսանողների ինչպես ընտրությանը, այնպես էլ հոգեբանորեն նրանց պատրաստելու, նրանց իրավունքների սահմանները բացատրելու և ամենակարևորը՝ չեն ուսումնասիրվել Թուրքիա մեկնող ուսանողի հայրենասիրության չափը, տեղեկացվածությունը Հայոց ցեղասպանության ու առանձնապես նրանց հայացքների՝ նվիրվածությանը "Հայ-դատին" ու հայրենասիրական ոգուն, այլապես այս խայտառակ հակահայ իրողության ակնատեսը չէինք լինի:

Այս պահին ինձ հետաքրքրում է մի հարց.

20 հայ ուսանողները վերադառնալով Հայաստան, արդյո՞ք համալսարանում քննարկման թեմա դարձավ այս երիտասարդների դավաճանական արարքը, արդյոք բացատրություն պահանջվե՞ց: Նման ազգադավ երիտասարդները չպետք է տեղ ունենան համալսարանում, նրանք արժանի չեն մեր մայր ԲՈՒՀ-ից ոտքերը ներս դնելու պատվին:

Այս համատեղ հայտարարության տակ 20 հայ ուսանողներից կորզած ստորագրություններով փաստաթուղթը թուրք պատմաբանները փորձում են օգտագործել աշխարհի աչքին թոզ փչելու՝ ներկայացնելու իբրև Հայոց ցեղասպանության իրենց պնդումներն և ուրացումները "վավերացնող անհերքելի ակտ": Իրականում իրենից իրավական արժեք չունեցող այս փաստաթուղթը

սեփական խարդախ նպատակներին ծառայեցնելը վկայում է զուտ ստով ու կեղծիքով առաջնորդվող թուրքական քաղաքական վերնախավի, պատմաբանների, մոլի ազգայնականների աշխարհին մոլորեցնող, ցեղասպանությունը կոծկող հերթական շանտաժի անհաջող փորձերից մեկը: Իրենց նպատակին հասնելու համար ինչերի՝ ասես չդիմեցին, ու մ ասես չխնդրեցին իրենց մեղսակիցը դառնալ:

Դժվար չէ կռահել, որ ամեն գնով 20 հայ ուսանողներից ստորագրություն կորզելը նպատակամղված է ապակողմնորոշելու թե՛ Եվրոպական պետություններին, թե՛ Եվրամիությանը, թե՛ Ամերիկային, թե՛ ողջ աշխարհին: Իմ կարծիքով չպետք է լուրջ վերաբերվենք այդ փաստաթղթին, որը չունի ոչ մի իրավական ուժ, քանզի աշխարհով մեկ հարյուր հազարավոր կենդանի վկայությունները, ֆիլմերը, արխիվային փաստաթղթերը, օտարների վկայություններն ու հուշերը, լուսանկարներն ու վերջապես տասնյակ պետությունների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ընդունումը, թուրք առաջադեմ անհատների՝ Թաներ Աքչամի, Օրհան Փամուքի, Էլիֆ Շաֆաքի, Հաում Չամուքի, Չարաքուլուի... տասնյակ թուրք հրատարակիչների հաստատումները Հայոց ցեղասպանության իրողության, ինչպես նաև ինտերնետով ստորագրահավաքի մասնակից 30000 թուրք մտավորականների ներողությունները հայ ժողովրդից, կարծեմ բավական է ի չիք դարձնելու Թուրքիայի պղտոր ջրում ձուկ որսալու նկրտումները և արժեզրկում խարդախորեն 20 հայ ուսանողների ստորագրած փաստաթուղթը իրենց ստոր մտադրություններին ծառայեցնելու համար:

* * *

Թուրքական դիվանագիտական հաջողությունները վերելք ապրեցին, երբ Հայաստանի նախագահը որոշեց ազգային խնդիրներն ու վեճերը հարթել քաղաքակիրթ եղանակով՝ "Ֆուտբոլային դիվանագիտությամբ":

Թե՛ Գյուլի Հայաստան այցը, թե՛ Դավոսում Պերեսին անպատվելն ու անմիջապես Մերժ Սարգսյանի հետ ձեռքսեղմումը, թե՛ 20 հայ ուսանողներից ստորագրություն կորզելը, թե՛ Շվեցարիայում ապրիլի 22-ին "ճանապարհային քարտեզի" ստորագրումը... միտված էին Հայոց ցեղասպանությանը հարցականի տակ դնելուն, չեզոքացնելու Թուրքիայի վրա ճնշումները, և ապակողմնորոշելու աշխարհին...

Այս չարաբաստիկ, անպտուղ դիվանագիտությունը թանկ նստեց մեր ազգի վրա. Ֆուտբոլային հրավերից սկսած Թուրքիան այնքան մուկն ու կատու խաղաց մեր նախագահի ու արտգործնախարարի հետ, մինչև Ապրիլի 24-ին քաղեց իրեն հնարամիտ սիրախաղի պտուղները. Օբաման չարտասանեց "ցեղասպանություն" բառը: Միրախաղն ավարտվեց, բայց մեր նախագահն ու արտգործնախարարն հանդգնություն չունեն խոստովանելու, որ խաղը տանուլ են տվել...

Բրյուսել